



Capacities for Sustained Locally-Led Development | Կարողունակ և կայուն համայնքաին գարգացում

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքաին գարգացում» ծրագիր

Գաղափարներ ներկայացնելու հրավեր

18 հունիսի, 2024թ.

ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք

«Կանայք հանուն զարգացման» հասարակական կազմակերպությունը ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) կողմից ֆինանսավորվող և «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից առաջնորդվող համընկերության «CapSLoc: Կարողունակ և կայուն համայնքաին գարգացում» ծրագրի շրջանակներում հայտարարում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան բազմաբնակավայր համայնքում համայնքային համախմբմանն ու մասնակցության խթանմանն ուղղված գաղափարների ներկայացման մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան բազմաբնակավայր համայնքի բնակիչները՝ CapSLoc ծրագրի մասնակից ՀԱԹ (համայնքային առաջնորդների թիմ) անդամների առաջնորդմամբ:

Ստորև ներկայացված են մրցութային ծրագրի նպատակը, խնդիրները, ծրագրի առաջարկ գրելու ուղենիշները, ծրագրի առաջարկի կառուցվածքը, վերջինիս ներկայացվող պահանջները, ծրագիր-առաջարկների գնահատման և ընտրության ընթացակարգը և չափանիշները:

I. Նպատակ

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքաին գարգացում» ծրագրի նպատակն է մեծացնել Ախուրյան խոշորացված համայնքի կարողություններն ու դիմակայունությունը՝ սեփական զարգացումն առաջնորդելու համար:

II. Խնդիրներ

Խնդիր 1՝ ամրապնդել Ախուրյան համայնքի կարողությունները և հանձնառությունը՝ առաջնորդելու սեփական զարգացումը շարունակական ուսուցման, տեղական առաջնահերթությունների բացահայտման և դրանց արձագանքման միջոցով:

Խնդիր 2՝ Ախուրյան համայնքում խթանել քաղաքացիների ներգրավվածությունն ու վերահսկողությունը որոշումների կայացման



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



գործընթացներում՝ բնակավայրերի մոբիլիզացման, վերջիններիս մասնակցային որոշումների կայացման և վերահսկման գործիքներով հազեցնելու միջոցով:

Սույն նպատակից և խնդիրներից ելնելով, ծրագրի այս փուլում նախատեսվում է ֆինանսավորել թվով 7 գաղափարներ: Գաղափարներն ուղղված են լինելու Ախուրյան համայնքում լրացնելու համայնքային համախմբման և մասնակցության ոլորտում գրանցված բացերը: Դիմորդ խմբերը կարող են կենտրոնանալ այնպիսի հիմնախնդիրների լուծման և իրավիճակի բարելավման վրա, ինչպիսիք են մասնավորապես՝

- Երիտասարդների ժամանցի և զբաղվածության սակավ հնարավորություններ
- Պատմամշակութային վայրերի նկատմամբ անտարբերություն
- Համայնքային խնդիրների հանդեպ անտարբերություն, պասիվ մասնակցություն
- Էներգիաարդյունավետության վերաբերյալ ցածր իրազեկվածություն
- Առողջ ապրելակերպի նկատմամբ ցածր հետաքրքրություն
- Զբոսաշրջության թույլ առաջարկ՝ ամբողջական զբոսաշրջային փաթեթների առաջարկի բացակայություն
- Մշակութային կյանքի պասիվություն՝ ներհամայնքային միջոցառումների, փառատոնների պակաս
- Նորարար, ժամանակակից գրադարանների անհասանելիություն
- Այլ համայնքային համախմբմանն ու մասնակցության խթանմանն ուղղված գաղափարներ

Հաղթող գաղափարների իրականացման գործընթացը կմեկնարկի ոչ շուտ, քան 2024թ.-ի հուլիսի 15-ը և իրականացումը պետք է ավարտված լինի ոչ ուշ, քան 2024թ.-ի սեպտեմբերի 20-ը:

III. Ծրագրի առաջարկ գրելու ուղենիշներ ու պահանջվող փաստաթղթեր

Հետևյալ ուղենիշներում տրված են ծրագրի առաջարկի կառուցվածքը և փաթեթում պահանջվող փաստաթղթերի շարքը:

Այն ծրագրերի առաջարկները, որոնք չեն ընդգրկում պահանջվող ողջ տեղեկատվությունը, գերազանցում են էջերի թույլատրելի սահմանը կամ չեն համապատասխանում ներկայացված ուղենիշներին, **չեն քննարկվի**:



Ծրագրի առաջարկ գրելու ուղենիշներ

1. Տիտղոսաթերթ (1 էջ)

Տվյալ բնակավայրերի խմբի /Կլաստերի թիվը ¹ և կլաստերի կազմի մեջ մտնող բնակավայրերի անվանումները	
Ծրագրի ղեկավարի անունը, ազգանունը և կոնտակտները	
Ծրագրի մեջ ներգրավված ՀԱԹ անդամների տվյալներ Անուն-ազգանուն-կոնտակտներ	
Ծրագրի անվանումը	
Ծրագրի տևողությունը	
Ծրագրի իրականացման վայրը	
Դոնորից ակնկալվող գումարի չափը ՀՀ դրամով	
Դիմորդ խմբի կամ այլ դոնորների կողմից ներդրումների ամբողջ գումարի չափը ՀՀ դրամով	
Ծրագրի ընդհանուր արժեքը՝ ՀՀ դրամով	

2. Համառոտագիր (1 էջ)

- Հստակ ձևակերպված հիմնախնդիր
- Ծրագրի նպատակ
- Ծրագրի խնդիրներ
- Ակնկալվող արդյունքներ
- Գործողություններ
- Թիրախ խումբ/կառույց, շահառուներ
- Ծրագրի ընդհանուր արժեք
- Ներդրման չափ

¹ Կլաստեր 1 - Լեռնուտ, Փոքրաշեն, Քեթի, Հացիկ, Հացիկավան, Կարմրաքար
Կլաստեր 2 - Ազատան, Բենիամին, Բայանդուր, Երազգավորս, Գետք
Կլաստեր 3 - Շիրակ, Կամո, Ջաջուռ, Ջաջուռավան, Կրաշեն, Մեծ Սարիար
Կլաստեր 4 - Ղարիբջանյան, Ոսկեհասկ, Առափի, Հայկավան, Ախուրիկ
Կլաստեր 5 - Մայիսյան, Հովունի, Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս
Կլաստեր 6 - Այգաբաց, Արևիկ, Ախուրյան, Ախուրյան կայարան
Կլաստեր 7 - Բասեն, Կառնուտ, Հովիտ, Ջրառաս



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



- Դոնորից ակնկալվող գումարի չափ

Չնայած, որ գործադիր ամփոփումը ծրագրի առաջարկի առաջին էջն է, այն պետք է գրել ծրագրի առաջարկի մշակման վերջին փուլում, քանի որ այն պետք է ամփոփի ծրագրի ողջ առաջարկը:

3. Հիմնախնդրի նկարագրություն (1 էջ)

Պարզ և հստակ ձևակերպեք ծրագրի հիմքում ընկած պրոբլեմը (հիմնախնդիրը): Փաստերով հիմնավորեք պրոբլեմը՝ հղում անելով տվյալ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտություններին¹ կամ համայնքային ֆորումների արդյունքներին²:

Հիմնախնդրի նկարագրությունը ենթադրում է՝

- Մեկ նախադասությամբ ձևակերպված հիմնախնդիր,
- Հիմնախնդրի հիմնավորումը,
- Հիմնախնդրի լուծման հիմնական մոտեցումները:

Ծրագրի նկարագրություն (4 – 6 կետեր)

4. Ծրագրի հայեցակարգ (1-2 էջ)

Ծրագրի առաջարկի այս հատվածում խնդրում ենք ներկայացնել, թե տվյալ ծրագրի շրջանակներում **ի՞նչ** էք նախատեսում իրականացնել, **ինչպե՞ս** և **ի՞նչ** էք նախատեսում արդյունքում ունենալ:

- Ծրագրի նպատակը
- Ծրագրի խնդիրները
- Ակնկալվող արդյունքները
- Ծրագրային գործողություններ
- Ծրագրի ակնկալվող ներգործություն
- Ծրագրի շարունակելիությունը/կենսունակությունը:
- Կլաստերի կազմի մեջ մտնող բնակավայրերի ներգրավվածություն ծրագրում (նկարագրել, թե տվյալ կլաստերի բնակավայրերից յուրաքանչյուրն ինչպե՞ս է մասնակցելու ծրագրին և/կամ շահելու ծրագրի իրականացման արդյունքում)

¹ Հետազոտություն 1 - «Քաղաքացիության ինդեքս»՝ https://drive.google.com/file/d/1NTiQQA-EpuODWkko_g-c8DBDhUmj7ZC/view?usp=sharing

Հետազոտություն 2 – «Ախտոյան համայնքի ակտիվների գույքագրում/քարտեզագրում»՝ <https://drive.google.com/file/d/13DggXR0QaPn7VJcvff3Xwzsqz5jfVq/view>

² 2024 թ-ի մայիսին Ախտոյան համայնքի բնակավայրերի բնակիչների և ՀԱԹ անդամների մասնակցությամբ իրականացված համայնքային ֆորումների ամփոփաթեթը՝ <https://drive.google.com/file/d/1P5FpryqYsqtsOFK9nZn4XXij9sRwxRmy/view?usp=sharing>



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻԹՅ



5. Ծրագրի իրականացում և ղեկավարում (Ի՞նչ, Ե՞րբ, Ո՞վ է պատասխանատու) (1-2 էջ)

Ըստ հերթականության նկարագրեք ծրագրի իրականացման քայլերը/փուլերը:

Խնդրում ենք նաև կցել Գանտի աղյուսակը, որի ձևն առդիր է (Հավելված 1): Խնդրում ենք կից ներկայացնել նաև ծրագրում ընդգրկված բոլոր մասնակիցների տվյալները (անուն-ազգանուն-բնակավայր-զբաղվածություն/ոլորտ-հեռախոս-էլ.փոստ)՝ առանձին ֆայլով:

6. Վերահսկում և գնահատում (1 էջ)

Խնդրում ենք նշել, թե ինչպես եք չափելու ծրագրի արդյունավետությունը՝ ընթացքում և ավարտին: Պարտադիր չէ, որ պլանը շատ մանրամասն լինի, կարող եք նշել վերահսկման և գնահատման ընդհանուր մոտեցումները, տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդները, ցուցիչները և ցուցիչների ստուգման ժամկետները:

7. Բյուջե և բյուջեի բացատրություն (մանրամասն նկարագիր) (1-2 էջ)

Բյուջեում (Հավելված 2) ներկայացվում են ծրագրի իրականացմանն անհրաժեշտ ռեսուրսները: Դրանք կարող են ներառել՝ փորձագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր (*հաշվի առնել այն հանգամանքը, որ ՏԻՄ և ՀԱԹ ներկայացուցիչները չեն կարող ծրագրի շրջանակներում ներգրավվել որպես փորձագետներ*), գույք/սարքավորումների գնում և/կամ վարձակալում (*շատ լավ հիմնավորման և ծրագրի պահանջներին համապատասխանելու պարագայում միայն կարող են հաստատվել նմանատիպ ծախսեր*), գրասենյակային կամ գրենական պարագաների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային ծախսեր, այլ: Բյուջեն պետք է ներառի նաև դիմորդ խմբի կամ այլ դոնորների թե՛ ֆինանսական և թե՛ ոչ ֆինանսական ներդրումները (օրինակ՝ գրասենյակի տարածք, սարքավորումներ և այլն):

Բյուջեի բացատրությունում (Հավելված 3) ներկայացվում է ձեռք բերվող ռեսուրսների տեսակները, միավորի արժեքը, գների հիմնավորումը, ինչպես նաև վերջիններիս անհրաժեշտությունը ծրագրի արդյունավետ իրականացման համար:

ՕԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

- Անհրաժեշտ է հիմնավորել բոլոր տեսակի ծախսերը: Օրինակ համակարգչի գնումը սեմինար կազմակերպելու համար հիմնավորված ծախս չի կարող համարվել: Երբեմն, կարճաժամկետ օգտագործման դեպքում գույքի վարձակալությունը կարող է առավել նախընտրելի լինել:



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



- Ծրագրի կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսները չեն կարող ուղղվել ցանկացած տիպի շինարարական, կամ վերանորոգման աշխատանքների իրականացմանը և նախաձեռնող խմբի աշխատանքի վարձատրությանը:

Սույն դրամաշնորհի շրջանակներում թույլատրելի ծախսերը կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- ◆ Ծրագրային ծախսեր
- ◆ Սարքավորումների/գույքի ձեռքբերման կամ վարձակալության ծախսեր
- ◆ Փորձագիտական ծառայությունների ձեռքբերման ծախս
- ◆ Վարչական ծախսեր
- ◆ Այլ

Ծրագրային ծախսերը ներառում են ծրագրով նախատեսված հիմնական գործողություններն իրականացնելու համար ծախսերը: Դրանք կարող են ընդգրկել ծրագրի իրականացման, վերահսկման և գնահատման, շահառուների/թիրախ խմբի կարիքների ուսումնասիրության, անհրաժեշտ գրականության կամ ուսումնական նյութերի ձեռքբերման, սեմինարների կազմակերպման (նյութերի պատրաստում, դասընթացի համար անհրաժեշտ տարածքի վարձակալություն) և այլ ծախսեր:

Սարքավորումների/գույքի համար ծախսերը (չպետք է գերազանցեն ընդհանուր բյուջեի 20-30 %-ը) ներառում են համակարգիչ, տպիչ սարք, այլ սարքավորումներ կամ անհրաժեշտ գույք գնելու կամ վարձակալելու համար ծախսերը, որոնք պետք է խիստ հիմնավորված լինեն և բխեն սույն ծրագրի իրականացման արդյունավետության անհրաժեշտությունից:

Փորձագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսերը ներառում են ծրագրում անմիջականորեն ներգրավված, հրավիրված ոլորտային մասնագետների/փորձագետների ծառայությունների վարձատրության ծախսեր: Այդ անձինք կարող են վարձատրվել միայն ծրագրի շրջանակներում իրականացրած իրենց գործունեության համար:

Վարչական ծախսերը նախատեսում են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը (տպագրության և պատճենահանման /օրինակ՝ թուղթ, տոներ, ծրարներ/ և այլ ծախսեր):



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



IV. Ծրագրի առաջարկին ներկայացվող պահանջները

1. Ծրագրերի առաջարկները պետք է մշակված լինեն CapSLoc ծրագրի կողմից առաջարկվող Ծրագրի առաջարկի ձևաչափի հիման վրա:
2. Դոնորից ակնկալվող ֆինանսավորման չափը չպետք է գերազանցի՝
 - **760.000** (յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ 4 բնակավայրերից կազմված կլաստերի դեպքում:
 - **950.000** (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ 5 բնակավայրերից կազմված կլաստերի դեպքում:
 - **1.140.000** (մեկ միլիոն մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ 6 բնակավայրերից կազմված կլաստերի դեպքում:
3. Սույն դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ներկայացվող ծրագրերի առաջարկներում նախատեսվող գործունեության տևողությունը չպետք է գերազանցի **2,5 ամիսը**:
4. Դրամաշնորհային մրցույթին դիմող խումբը կարող է ներկայացնել **առավելագույնը 2 (երկու)** ծրագրի առաջարկ՝ հայերեն լեզվով, տպագիր և էլեկտրոնային տարբերակներով: Ներկայացվող ծրագրերի առաջարկները պետք է կազմված լինեն համակարգչային *Word* ծրագրով, *Sylfaen* տառաձևով, *12* տառաչափով: Ծրագրի առաջարկի բոլոր էջերը պետք է ծրագրի ղեկավարի կողմից **ստորագրված** լինեն, իսկ ծրագիր առաջարկի վերջին էջը պետք է ստորագրված լինի նաև տվյալ խմբի կազմի մեջ գտնվող բոլոր ՀԱԹ անդամների կողմից:
5. **Հարկ է ներկայացնել տվյալ ծրագրի առաջարկի և պարտադիր հավելվածների փաթեթը**, որը պետք է պարունակի.
 - 1) Ծրագրի առաջարկը,
 - 2) Գանտի աղյուսակը,
 - 3) Ծրագրի բյուջեն և բյուջեի բացատրությունը,
 - 4) Ծրագիրն իրականացնող բոլոր անձանց տվյալները պարունակող ցանկ,
 - 5) Ախուրյանի տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) հետ կնքված փոխըմբռնման հուշագիր՝ համագործակցության մասին **կամ** աջակցող նամակ:

Այն փաթեթները, որոնք չեն ընդգրկում պահանջվող ողջ տեղեկատվությունը, ԿՄԵՆԺՎԵՆ:



6. Ծրագրերի առաջարկների փաթեթները պետք է ներկայացնել տպագիր տարբերակը՝

«Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի գրասենյակ
ՀՀ, Շիրակի մարզ
Ք. Գյումրի, Շահումյան 6ա, բն. 16

Էլեկտրոնային տարբերակը՝

ուղարկել info.capsloc@gmail.com էլ.- փոստով՝ հասցեի տողում նշելով՝
«Մրցույթի հայտ - Կլաստեր X»:

Մրցույթի հետ կապված հարցերի դեպքում դիմել՝
ՀԿ Կենտրոնի դրամաշնորհների ղեկավար
Սյուզան Հովսեփյանին
հեռ. 091-74-33-15
էլ.-փոստ՝ hovsepyansyuzan@gmail.com

Ծրագրերի առաջարկների փաթեթի ներկայացման վերջնաժամկետն է 08 հուլիսի, 2024 թ., ժամը 17:00:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ուշացումով ներկայացված Ծրագրերի առաջարկների փաթեթները **ՉԵՆ ԸՆԴՈՒՆՎԻ:**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ծրագրի առաջարկները պետք է համապատասխանեն սույն հրավերի փաստաթղթում տրված բոլոր ուղենիշներին և պահանջներին, այլապես՝ **ՉԵՆ ՔՆՆԱՐԿՎԻ:**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Առաջարկի փաթեթը կազմելիս խնդրում ենք առաջնորդվել IV հատվածի 5-րդ կետով, որպեսզի ապահովվեք պահանջվող բոլոր փաստաթղթերի **ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ:**

V. Գնահատման չափանիշներ

Բաղադրիչներ	Միավորներ
Հիմնախնդրի նկարագրություն, հիմնախնդրի լուծման հրատապությունը /կարևորությունը համայնքի համար	25
Ծրագրի նկարագրություն	25
Համայնքի ընդգրկում. որքա՞ն մարդ է օգտվելու ծրագրից	10



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ



Ծրագրի իրականացման պլան: Գանտի աղյուսակ Ծրագրի վերահսկում և գնահատում	20
Բյուջե/Բյուջեի բացատրություն	20
ԸՆԴԱՄԵՆԸ	100 միավոր

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ծրագրերի առաջարկների վերաբերյալ ընտրող հանձնաժողովի վերջնական որոշման մասին բոլոր դիմորդ խմբերը *կտեղեկացվեն գրավոր:*

VI. Ծրագրերի առաջարկների ընտրության ընթացակարգը և չափանիշները

1. Ծրագրերի առաջարկների ընտրությունը կատարում է Առաջարկներ քննարկող հանձնաժողովը (ԱՔՀ):
2. Քննարկվում են միայն սույն Հրավեր փաստաթղթում տրված ուղենիշներին համապատասխան և բոլոր պահանջները բավարարող ծրագրերի առաջարկները:
3. Դրամաշնորհները հատկացվում են **մրցութային** կարգով, ֆինանսավորվում CapSLoc ծրագրի կողմից, ֆինանսավորված ծրագրերի ծախսերը կատարվում են «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի կողմից:
4. Ծրագրերի առաջարկները գնահատվելու և ընտրվելու են առդիր գնահատման չափանիշներով:
5. ԱՔՀ-ն կարող է ընտրության փուլն անցած ծրագրերի առաջարկների առնչությամբ դիմորդ խմբերին գրավոր դիտողություններ և/կամ հարցեր ներկայացնել՝ լրացուցիչ պարզաբանումների նպատակով:

VII. Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված գործողություններն ըստ ժամկետների.

#	Գործողություն	Ժամկետներ
1.	Ծրագրի առաջարկ գրելու հրավեր, առաջարկի փաթեթի ներկայացում	Հունիսի 18, 2024
2.	«Ծրագիր առաջարկի մշակում» թեմայով կողմնորոշիչ հանդիպում-դասընթաց Հանդիպման մասնակցության գրանցման հայտ	Հունիս 24, 2024



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



#	Գործողություն	Ժամկետներ
	https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScN-Dj5I_Myk9woNjkSvkeLiDTykn9SHe0acErtTTM2kkGh1A/viewform	
3.	Ծրագրերի առաջարկների ներկայացման վերջնաժամկետ	Հունիսի 08, 2024
4.	Ընտրության փուլն անցած ծրագրերի առաջարկների առնչությամբ դիմորդներին գրավոր դիտողությունների և/կամ հարցերի ներկայացում՝ լրացուցիչ պարզաբանումների նպատակով: Պատասխանների ստացում:	Հունիսի 10, 2024 Հունիսի 12, 2024
5.	Մրցույթի արդյունքների ամփոփում: Հաղթող ծրագիր առաջարկների ընտրություն: Հաստատման և մերժման նամակների ուղարկում դիմորդներին: Ծրագրերի մեկնարկ:	Հունիսի 12-14, 2024 Հունիսի 15, 2024

Ուշադրություն՝ Ծրագիր-առաջարկի ներկայացումը դեռևս չի նշանակում, որ ծրագիրն անպատճառ կֆինանսավորվի, կամ կփոխհատուցվեն վերջինիս նախապատրաստման և ներկայացման համար կատարված ծախսերը:

*«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագիրն իրականացվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:
«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագիրն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ:*